ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի սեպտեմբերի 21-ից 23-ը Ուզբեկստանի Հանրապետություն (Տաշքենդ) գործուղման արդյունքների մասին

1. **ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ**

   Կարեն Գիլոյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ**

   Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

   Ուզբեկստանի Հանրապետություն, քաղաք՝ Տաշքենդ, սեպտեմբերի 21-ից 23-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Ուզբեկստանի Հանրապետության ԱՊՀ գործադիր կոմիտեի տեղակալ Բ.Մ.Ժումախանով

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   2022 թվականի սեպտեմբերի 21-23-ը Ուզբեկստանի Հանրապետություն (Տաշքենդ) Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության մասին համաձայնագրի մասնակիցների՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերով խորհրդի հերթական նիստին մասնակցելու նպատակով:

6" **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

Նիստի ժամանակ քննարկվել են 12 թեմաներ՝

1.Ուզբեկստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի հանրային քաղաքականության մասին,

2. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում ԱՊՀ անդամ պետությունների միջև համագործակցության զարգացման Ռազմավարության իրականացման 2021–2023 թվականների գործողությունների ծրագրի իրականացման մասին 2021–2030 թթ.,

3. ԱՊՀ անդամ երկրներում 2022 թվականին ԱՊՀ առողջության մարաթոնի միջոցառումների նախապատրաստման մասին,

4. Բելառուսի Հանրապետությունում 2023 թվականին ԱՊՀ երկրների II խաղերի նախապատրաստման մասին,

5. ԱՊՀ երկրներում հաշմանդամություն ունեցող երեխաների ամառային և ձմեռային սպարտակիադաների անցկացման կանոնակարգի նախագծի մասին,

6. ԱՊՀ երկրների առաջնությունների նախագծի մասին (առաջնություններ, գավաթներ) ըստ սպորտի կանոնակարգի,

7. «Սպորտային մայրաքաղաքներ համագործակցության» միջպետական ծրագրի կանոնակարգի նախագծի նախապատրաստման վերաբերյալ,

8. ԱՊՀ անդամ պետությունների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում հիմնական կազմակերպության գործունեության մասին,

9. Մարզիկների նկատմամբ խտրականության անթույլատրելիության մասին խորհրդի հայտարարության վերաբերյալ,

10. Խորհրդի 2023 թվականի աշխատանքային պլանի մասին,

11. Խորհրդի նախագահության մասին,

12. Խորհրդի հաջորդ նիստի մասին:

7" ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Ունեցել եմ հանդիպումներ ԱՊՀ երկրների ղեկավար անձանց հետ, քննարումներ ենք ունեցել ԱՊՀ երկրներում իրականացվող ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին բարեփոխումների, ոլորտի ծրագրային և զարգացման ուղիների վերաբերյալ:

Մասնակցել եմ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ԱՊՀ երկրների խորհրդի նիստին, որտեղ համաձայն օրակարգում ընդգրկված հարցերի՝ տեղի են ունեցել լսումներ և քննարկումներ, այնտեղ ներկայացրել եմ Հայաստանի Հանրապետության կառավարության տեսակետը վերոնշյալ կետերի շուրջ՝ ներկայացնելով համապատասխան կետերի շուրջ տեսակետս: Եվս մեկ անգամ հաստատել եմ մեր պատրաստակամությունը 2023 թվականի հոկտեմբերին Երևանում անցկացնել «Սպորտային համաժողով»-ը՝ ընդունելով ԱՊՀ երկրների մեր գործընկերներին:

8.ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

26.09.2022

Կ. Գրիգորյան